ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26 **մայիսի** 2020 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նախքան օրակարգին անդրադառնալը, ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյանը և առաջարկեց 2020 թվականի մայիսի 26-ի նիստի օրակարգի նախագծից հանել օրակարգի 5-րդ հարցը՝ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանը:

Առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 17, դեմ՝ 28, ձեռնպահ՝ 8

Առաջարկը չընդունվեց

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. «Ալեքսանդր Հոթել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
5. «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
6. Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի ճաշարանում հանրային սննդի կազմակերպման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝0, ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ -** «Ալեքսանդր Հոթել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««Ալեքսանդր Հոթել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանա-տեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝39, դեմ՝5, ձեռնպահ՝8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ -** Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Հ.Շիրազի փողոցի հ.1/6 հասցեում Արմեն Սինանյանին սեփականության իրավունքով պատկանող 500.1 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝41, դեմ՝0, ձեռնպահ՝6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. **ԼՍԵՑԻՆ -** Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1.Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լյուդմիլա Սարգսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N178-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12-23-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝44, դեմ՝0, ձեռնպահ՝4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. **ԼՍԵՑԻՆ** - «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1.Պավել Սարգսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Աննա Ջավախյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4.Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5.Մարկոս Հարությանյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ ««Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 15 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արմեն Կոտոյյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
5. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
8. Էդգար Բարսեղյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
9. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
10. Հռիփսիմե Առաքելյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
11. Պավել Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
12. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
13. Աննա Զավախյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
14. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
15. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը /ոչ բնակելի տարածքները/ անհատույց օգտագործման իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝31, դեմ՝2, ձեռնպահ՝1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի ճաշարանում հանրային սննդի կազմակերպման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Արթուր Մկրտչյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1.Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի ճաշարանում հանրային սննդի կազմակերպման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի ճաշարանում /ընդհանուր մակերեսը 212.03 մ², որն իր մեջ ներառում է 111.66 մ² սպասարկման սրահ, 39.34 մ² խոհանոց, 34.51 մ² նկուղ և 26.52 մ² սրճարան/ հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման համար մասնակիցների ընտրության նպատակով հրապարակել առաջարկների ներգրավման հայտարարություն:

2. Առաջարկների ներգրավման հայտարարությունը հրապարակել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքում: Հայտարարության մեջ նշել, որ ընտրված մասնակիցը ֆիզիկական անձանց մատուցելու է հանրային սննդի կազմակերպման ծառայություն՝ հետևյալ պայմաններով՝

1) կոմունալ ծառայությունների դիմաց ընտրված մասնակիցը չի վճարում.

2) ընտրված մասնակցին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու են ճաշարանի տարածքը և փաստացի առկա սարքավորումները (շարժական գույք).

3) ճաշարանի աշխատանքային ժամերն են՝ աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ը,

4) սրճարանի աշխատանքային ժամերն են՝ աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ը

5) ճաշարանում մատուցվող սնունդն ու ըմպելիքները պետք է պատրաստված լինեն բացառապես թարմ մթերքներից, համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր նորմերին.

6) տաք (սառը) մսային ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ տեղական (չներկրված) մսից.

7) յուրաքանչյուր օր մատուցվող ճաշատեսակները պետք է լինեն ոչ պակաս, քան 3-4 տեսակի (ճաշացանկը պետք է փոփոխվի յուրաքանչյուր օր).

8) տրամադրվող սարքավորումները (շարժական գույք) վնասելու դեպքում ընտրված մասնակիցը պետք է հատուցի իր կողմից պատճառված բոլոր վնասները՝ ամբողջական ցանկին համապատասխանեցնելու նպատակով.

9) եթե անհրաժեշտ են հավելյալ սպասք կամ սարքավորումներ, ապա դրանք պետք է գնվեն ընտրված մասնակցի կողմից.

10) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում չափաբաժինները և զուտ քաշը (գրամներով) սահմանվելու են պայմանագրով՝ հայտարարությանը համապատասխան, իսկ գները սահմանվելու են ընտրված մասնակցի ներկայացրած նվազագույն գներով և ենթակա չեն

փոփոխման առանց նախապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ համաձայնեցնելու.

11) սահմանված պայմանների խախտման դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը սահմանում է թերությունների վերացման ողջամիտ ժամկետ: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը.

12) ընտրված մասնակիցն իր հաշվին պետք է ապահովի անձեռոցիկների, կերակրի աղի և պղպեղի առկայությունը ճաշարանում.

13) ընտրված մասնակիցը պետք է յուրաքանչյուր օր մատուցի հրավերով սահմանված բազային ճաշատեսակներից առնվազն 10 միավոր՝ պայմանագրով սահմանված գներից ոչ բարձր գներով.

14) ընտրված մասնակիցը բազային ճաշացանկում չներառված ճաշատեսակների չափաքանակները և գները պետք է նախապես համաձայնեցնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հետ.

15) ընտրված մասնակիցը պետք է թույլատրի անարգել հսկելու սույն կետում նշված պահանջների կատարումը և կատարի պայմանագրով սահմանված այլ պահանջները:

3. Սահմանել, որ պայմանագիրը կկնքվի այն մասնակցի հետ՝

1) որն ունի առաջարկը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) մասնագիտական փորձ (անհրաժեշտ է կցել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր).

2) որն ունի հանրային սննդի կազմակերպման յուրաքանչյուր գործառույթի իրականացման համար սահմանված որակավորում ունեցող անձնակազմ.

3) որի ամբողջ անձնակազմն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բժշկական փաստաթղթեր և համապատասխան արտահագուստ.

4) որի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկն ամենացածրն է հրավերով հրապարակված ճաշացանկի համար:

4. Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է 3 տարի ժամկետով:

5. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի պահանջով՝ առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղեկացնելով մյուս կողմին:

6. Սույն որոշմամբ նախատեսված գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում հայտարարությունը վերահրապարակվում է

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝35, դեմ՝0, ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2020 թվականի հունիսի 24-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկը ընդունվեց:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (աղագրությունը կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան